ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2020/38

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 38

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ
Գործունեության հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Վարդենիս, փողոց Վ. Համբարձումյան, շենք 19

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 24.12.20թ.-ի Հանձնաժողովի նիստում քննարկեց Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	22 հունվարի 2019
բուհի ինքնավերլուծության ներկայացում	23 օգոստոսի 2019
փորձագիտական այցի իրականացում	11–13 դեկտեմբերի 2019
փորձագիտական զեկույցի ներկայացում	16 մարտի 2020
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	25 մարտի 2020

Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»**, գնահատվել են անբավարար:

Գնահատումն իրականացնելիս հաշվի է առնվել, որ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը, իր առաքելության համաձայն ապահովում է տարածաշրջանը կարևոր նշանակություն ունեցող բժշկական կադրերով, ինչպես նաև գրադարանավարներ է պատրաստում շրջանի դպրոցների համար: Ներքին և արտաքին շահակիցները ընդգծում են քոլեջի գործունեության կարևորությունը Վարդենիսի և հարակից սահմանամերձ գյուղերի համար: Քոլեջում կրթություն են ստանում Վարդենիսի 20 համայնքներից ուսանողներ:

1) ՄԿԾ-ները նկարագրված են լիազոր մարմնի կողմից հաստատված Պետական կրթական չափորոշիչներով, որոնք հիմնվում են գիտելիքի, հմտությունների և կոմպետենցիաների ոլորտներում չափելի վերջնարդյունքների վրա: Քոլեջի կողմից մշակված դասընթացների ծրագրերի վերջնարդյունքները հիմնականում համապատասխանում են ՄԿԾ վերջնարդյունքներին:

Անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ արդիականացնել ՄԿԾ-ները, վերանայել առարկայական ծրագրերը, ունենալ մշտադիտարկման հուսալի մեխանիզմներ:

Ընդհանուր առմամբ քոլեջը մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման և ուսանողների ուսումնառության համար ստեղծել է բարենպաստ միջավայր, սահմանել է չափազանց ցածր ուսման վարձավճարներ և տրանսպորտային միջոց է տրամադրում գյուղերից Վարդենիս ուսանողների տեղափոխման համար: Կրթական գործընթացի իրականացման համար հաստատությունը գործատուների աջակցությամբ հիմնականում ապահովված է անհրաժեշտ ռեսուրսներով:

Քոլեջում դասավանդում են տարածաշրջանի ճանաչված բժիշկներ, ուսանողներն իրենց փորձուսուցումը անցնում են Վարդենիսի բուժհիմնարկներում: Դա հնարավորություն է տալիս, որ ուսանողները ձեռք բերեն աշխատաշուկայում առավել պահանջված գործնական հմտություններ:

Որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից քոլեջում առկա են առաջխաղացման միտումներ և օրինակներ, սակայն դեռևս խնդիրներ և ռիսկեր կան:

2) Քոլեջում դեռևս բացակայում է ռազմավարական կառավարումը, թեպետ առաջին քայլերը արդեն արվել են՝ մշակվել է ռազմավարական ծրագիր, մեխանիզմներ իր գործունեության արդյունավետությունը և ռազմավարական նպատակների առաջընթացը գնահատելու նպատակով: Այնուամենայնիվ քոլեջը պետք է ավելի արդյունավետ մեխանիզմներ և գործիքակազմ ներդնի կառավարումը ՊԻԳԲ շրջափուլով իրականացնելու համար: Բարելավման պլանում քոլեջը դա նախատեսել է: Որոշումները կայացնելիս քոլեջը չի հիմնվում ներքին և արտաքին գործոնների համակողմանի վերլուծության վրա, ինչը հնարավորություն չի տալիս մեղմացնել արտաքին ռիսկերը և օգտվել հնարավորություններից:

Որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է:

Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:

3) Քոլեջը դեռևս չի հստակեցրել՝ ինչ է իր համար հետազոտությունը, այդ պատճառով քննադատական մտածողության և հետազոտական կարողությունների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքը ունի թերություններ և համակարգված չէ:

Քոլեջը բավականին ծավալուն կապեր ունի մարզի և տարածաշրջանի աշխատաշուկայի մասնակիցների հետ, ինչը հնարավորություն է տալիս շարունակական կապ ունենալ և արձագանքել աշխատաշուկայի զարգացումներին: Սակայն միջազգայնացմանը նպաստող քայլեր դեռևս չեն իրականացվում:

Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագրի մեծ մասի իրականացումը ռիսկեր չի պարունակում: Ծրագրով սահմանված արդյունքների ձեռքբերումը կարող է նպաստել քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում առկա խնդիրների լուծմանը՝ երաշխավորելով հաստատության կայուն առաջընթացը:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.

   ա) **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում

առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

բ) քոլեջի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի քանակական ցուցիչներ ունենալու պահանջը,

գ) քոլեջի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2020 թ., դեկտեմբերի 24
ք.Երևան